

## Հայ ազգային կուսակցությունների կազմակերպական կառույցների ստեղծումը Կարինում և դրանց գործունեության վաղ շրջանը

Մարգարյան Ա.Ս.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/  
sargsyanarman@bk.ru

Վճռորոշ քառեր՝ Կարին, հայ ազգային կուսակցություններ, ստեղծում, գործունեություն

### Создание организационных структур армянских национальных партий в Карине и ранний период их деятельности

Саргсян А.С.

Институт истории НАН РА (Армения, Ереван)  
sargsyanarman@bk.ru

**Резюме:** В последней четверти XIX века, город Карин и армяне одноименной провинции сыграли важную роль в национально-освободительной борьбе. В результате национального пробуждения в течение постберлинского периода, несколько освободительных групп были основаны и «Защитник отечества» была самой значительной среди них. На этой основе, вскоре новообразованные партии также начали свою политическую деятельность в Карине. С самого начала деятельности партии Арменакан (с некоторыми оговорками), Гнчак и АРФ приступили к созданию соответствующих филиалов в Карине. Своей активной пропагандой Гнчакяны пополнили свои ряды в основном бывшими членами «Защитника отечества». АРФ также, расширяя свою структуру, обеспечил приток преданных восточных армян в этот регион. В Карине и в соседних деревнях партии проводили широкую деятельность, активно участвуя также в борьбе федаинов.

**Ключевые слова:** Карин, армянские национальные партии, создание, деятельность

### Foundation of Organizational Structures of the Armenian National Parties in Karin and the Early Period of Their Activity

Sargsyan A.S.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)  
sargsyanarman@bk.ru

**Abstract:** In the last quarter of XIX century, Karin town and the Armenians of the province of the same name played an important role in the national liberation struggle. In the result of the national awakening during the post-Berlinian period, several liberation groups were founded and the “Defender of the Fatherland” was the most prominent among them. On this basis, soon newly formed parties also began their political activities in Karin. Since the first years of their establishment the Armenakan (with some reservations), Hunchakian and ARF parties had embarked upon the establishment of relevant branches in Karin. With their active propaganda the Hunchakians involved in the party mainly the former members of “Defender of the Fatherland”. ARF also extended its structure and ensured high influx of devoted Eastern Armenians to the region. The parties carried out a wide range of activities in Karin and neighbouring villages actively participating in the fight of fedayis too.

**Keywords:** Karin, armenian national parties, foundation, activity

Արևմտյան Հայաստանի երբեմնի ստվար հայկական բնակչություն ունեցող Էրզրումի նահանգն ու նույնանուն քաղաքը, դառնալով 19-րդ դարի ընթացքում տեղի ունեցած ռուս-թուրքական չորս պատերազմների թատերաբեմը, թեև զգալիորեն հայաթափվեցին, սակայն 1880-ական թթ. դեռևս պահպանում էին իրենց հայկական դիմագիծը: Ճիշտ է, թուրքերը և քրդերը քաղաքի բնակչության գերակշիռ մասն էին կազմում, սակայն տնտեսական լծակները, հատկապես՝ արհեստներն ու առևտուրը, գտնվում էին հայերի ձեռքում:

Ընդհանուր առմամբ, Կարին քաղաքը 19-րդ դարի հայոց պատմության բախտորոշ

թռիչքների և վերիվայրումների բնօրրանը դարձավ: Միմյանց հաջորդող ռուս-թուրքական պատերազմների ընթացքում, երբ վճռվում էր Մեծ Հայքի և Արևմտահայաստանի ապագան, Կարինը Արևելքի այդ երկու հզոր կայսրությունների մրցապայքարում դարձավ գլխավոր կռվախնձորը: Բուն Հայաստանի ուղղությամբ առաջ շարժվող ռուսական զորքի հետ ռազմի դաշտ նետված հայ կամավորականները մի քանի անգամ ազատագրեցին հայկական այս հինավուրց օջախը թուրքական լծից, նույնիսկ մոտեցան Կարինը մայրաքաղաք դարձնելու իրենց երազանքի իրագործմանը, բայց չկարողացան երկար վայելել

իրենց արյամբ նվաճած հաղթանակի պտուղը, որովհետև ռուսները վերստին թուրքին զիջեցին հայոց հողը և Կարնո հայությունը դարձյալ ենթարկվեց թուրքական ջարդին ու ավերմանը...

Կարինը հերթական ողբերգական վերիվայրումն էր ապրում 1878-ից հետո, երբ Բեռլինի դաշնագրով մեծապետական Եվրոպան պարզեց Օսմանյան կայսրության հայկական նահանգների բարենորոգման պահանջների դրոշը: Այդ օրերին սուլթանական գահին նոր բազմած Աբդուլ Համիդ 2-րդը կատաղի պայքար հայտարարեց հայոց վերագարթոնքին ու ժողովրդի ազգային ազատագրության և Հայաստանի անկախության շարժմանը: Իսկ Կարինում, լուսամիտ ու ազատախոհ հոգևորականների և վարժապետների գլխավորությամբ, հայ երիտասարդությունը մեծ խանդավառությամբ սկսեց ինքնակազմակերպվել:

Ընդհանրապես արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը 1880-ական թվականների առաջին տարիներից թևակոխեց նոր ու նորովի կազմակերպվելու փուլ: Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաշատ այլ քաղաքներում իրար հետևից ձևավորվեցին մի շարք ազատագրական-հեղափոխական խմբակներ, որոնց հենքի վրա հետագայում ստեղծվեցին կուսակցությունները:

Արևմտյան Հայաստանում առաջիններից մեկը Գ. Սրվանձտյանցի անմիջական մասնակցությամբ և պատրիարք Մ. Խրիմյանի ղեկավարությամբ կազմակերպված «Միություն ի փրկութիւն» գաղտնի խմբակն էր<sup>1</sup>: Վանի երկրորդ և ամենահզոր կազմակերպությունը «Սև խաչն» էր, որը հիմնադրվեց պատերազմից անմիջապես հետո՝ 1878 թվականին: Այն լավագույնս նպաստեց հայության մեջ ինքնապաշտպանության գործի կազմակերպման և ազատության հասնելու նպատակով զենք-զինամթերք հայթհայթելու ու դրան վարժվելու անհրաժեշտության ընդունմանը: «Սև խաչը» միաժամանակ գործում էր երկու ուղղությամբ. բացահայտ՝ բազմաբնույթ քարոզչական գործունեություն, և գաղտնի՝ զենքի հայթհայթում և, անհրաժեշտության դեպքում, ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպում: Հայտնի է, որ այս կազմակերպությո-

յանը գաղտնի ու բացահայտ անդամակցել ու ակտիվորեն գործել են Մ. Խրիմյանն ու Մ. Փորթուգայանը և ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականը: Հենց վերջինիս միջոցով իրար հետ կապ հաստատեցին Վանի «Սև խաչը» և Կարինի «Պաշտպան հայրենյանցը»<sup>2</sup>:

Կարին քաղաքի երիտասարդությունն իր քաղաքական ու մտավոր դաստիարակությունը և մշակութային զարգացումը «կ'ստանար Պոլիսեն և Կովկասեն», սակայն «կ'իուրացներ ինքնուրույն դրոշմ դնել է ետև միայն», իսկ նահանգի գյուղացիները հետևում էին քաղաքացիների օրինակին: Միանգամայն բնական էր, որ, XIX դարի վաթսուներկու թվականներից սկսած, գրեթե արևմտահայ հոգևոր-մշակութային կենտրոն Կ.Պոլսին զուգընթաց Կարինի շրջանի բնակչությունը նույնպես տոգորվեց վերափոխվելու անհրաժեշտության գիտակցությամբ և ազատատենչ գաղափարներով: Այստեղ նոր թափով զարգացան մշակույթը, արհեստները և առևտուրը, կազմվեցին միություններ և ընկերություններ, հիմնվեցին հանրային հասարակական հիմնարկություններ, հրատարակվեցին պարբերականներ: Կարինում մշակութային և մտավոր վերածնության ռահվիրա հանդիսացան Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանյանը, Մողոմոն իշխան Տեր Ազարյանը, Ալեքսան խան Ներսեսյանը, Հակոբ Հովասափյանը, Մահտեսի Հակոբ Մակարյանը, Հակոբ Արծնյանը, Մկրտիչ Աղապալյանը, Գևորգ Մսրլենցը, Մարկոս Գաֆայանը և այլ նշանավոր անձինք<sup>3</sup>: Նրանց ջանքերի շնորհիվ երիտասարդ սերունդը, ստանալով հայեցի և ազատաբաղձ ձգտումներով դաստիարակություն, ոտքի կանգնեց սեփական ժողովրդի ազատության համար:

Կարինահայության կրթական ու հասարակական կյանքն ավելի է աշխուժանում, երբ քաղաքի վարժարանների լիազոր տեսուչ 1862 թ. հաստատվում է Գարեգին Սրվանձտյանցը<sup>4</sup>: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ռուսական կողմի համար հաջող ընթացքը և

<sup>1</sup> Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 100-109:

<sup>2</sup> Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

<sup>3</sup> ՀԱՍ, ֆ. 420, ց. 16, գ. 9, թ. 72-73:

<sup>4</sup> Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Սրվանձտյանց Գ.-ի ֆ., II բ., գ. 65: Գ. Սրվանձտյանցը որոշ ընմիջումներով Կարինի բոլոր վարժարանների ընդհանուր տեսուչ եղավ 1862-69 թթ. ընթացքում:

Կարինում նրանց մի քանի ամիս մնալու հանգամանքը խթանեց և քաղաքում ստեղծվեցին մի քանի կրթամշակութային ընկերություններ՝ «Ղևոնդյանց», «Մամիկոնյանց» և «Բարձր Հայոց»: Դրանց նպատակն էր նպաստել կրթական գործին և երիտասարդ սերնդին հայեցի դաստիարակել: Այդ աշխատանքներին ավելի լայն թափ հաղորդեց այն իրողությունը, որ քաղաքի երիտասարդության ակտիվ միջամտությամբ քսանմեկամյա պաշտոնավարումից հետո հաջողվեց Կարնո առաջնորդ Վեհապետյանին հեռացնել և նրա փոխարեն նշանակել տալ Գրիգոր Զոհրապի բնորոշմամբ «եպիսկոպոսներից ամենաերիտասարդ և երիտասարդների եպիսկոպոս» Մաղաքիա Օրմանյանին:

Երիտասարդ առաջադեմ և ազգասեր եպիսկոպոսն իր հերթին հանդես եկավ նախաձեռնությամբ և նահանգի դպրոցներ հրավիրեց ունակ և առաջադեմ շատ ուսուցիչների, բարենորոգեց կրթարանները և վերափոխեց կրթական համակարգը: Օրմանյանի խորհրդով՝ քաղաքում գործող չորս մշակութային ընկերությունները՝ «Վարդանանց», «Դպրաց», «Ուսումնասիրաց» և «Ընթերցասիրաց», միավորվում են և կազմում «Բարձր հայոց միությունը»<sup>5</sup>: Այս ընկերությունն իր հովանավորությունը տարածում է տեղի հայկական Արծնյան, Մանասարյան, Աղբալյան և մյուս դպրոցների վրա և բարերար ազդեցություն ունենում ոչ միայն կրթության որակի բարելավման, այլև սաների մեջ ազատաբաղձ ձգտումներ սերմանելու գործում:

Կարինում սոցիալ-տնտեսական և կրթալուսավորչական փոփոխություններն ու հարեմաբաղձ ձգտումներով դաստիարակված նոր սերնդի առկայությունը պարարտ հող դարձան ազգային-ազատագրական շարժմանը նոր լիցք հաղորդելու համար: Հայկական հարցի միջազգայնացումը մեծ հույսերի, սպասումների ու ակնկալիքների առիթ էր տվել, իսկ թուրքական բռնակալությունից ազատագրվելու խնդիրը՝ օրակարգի հարց դարձրել: Ստեղծված նոր պայմաններին համապատասխան նոր մարտավարություն մշակելու անհրաժեշտություն էր առաջացել: Աղերսագրերը, հնազանդությունը թուրքական «բարեխնամ»

պետությանը չտվեցին սպասվող արդյունքները: Հնազանդ, հպատակ հայն այլևս չէր ուզում հաշտվել ստեղծված իրականության հետ և հանդես էր գալիս մարդկային ամենատարրական իրավունքներ ստանալու պահանջով: Հստակ էր, որ դրան հասնելու համար անհրաժեշտ էր համախմբվել, ստեղծել ժողովրդին իր հետևից տանող ուժեղ կազմակերպություններ:

Նախակուսակցական շրջանում հիմնադրված հեղափոխական-ազատական ուղղվածություն ունեցող խմբակների ակտիվ գործունեությունն ու գործիչների փառանգը դարձան այն հենքը, որի վրա ստեղծվեցին այդ կուսակցությունները: Այդ խմբակների մեջ, որպես քաղաքական կուսակցության նախատիպ, առանձնակի դերակատարություն է ունեցել «Պաշտպան Հայրենյացը», որի մասին կխոսենք մի փոքր ավելի մանրամասն:

Ամենաուժեղ և կուռ կառուցվածքով կազմակերպությունը 1881թ. մայիսին Կարինում հիմնադրված «Արարատ Լեռան Ընկերություն - Պաշտպան Հայրենյաց» հայկական գաղտնի կազմակերպությունն էր, որն ավելի հայտնի է «Պաշտպան հայրենյաց» անունով<sup>6</sup>: 1870-ական թթ. վերընթաց ապրող ազգային զարթոնքին ու առաջընթացին մեծապես նպաստել էին ռուսական բանակի հաղթանակները, որոնք ոգևորեցին, ուժ, համարձակություն ու եռանդ ներշնչեցին Կարինի երիտասարդությանը: Ազգանպաստ գործեր կատարելու անհազ մղումներով տոգորված երիտասարդներ՝ «Էրզրումցի Խաչատուր Կերեկցիան գործակցելով Կարապետ Ազաթեանի հետ երկուստեք հիմնեցին Հայրենասիրաց գաղտնի ընկերությունը, որի<sup>7</sup> աչքառու անդամներն էին Եղիշե Թուրսունեան, Յակոբ Իշգալացեան, Յովհան-

<sup>5</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, ք տպագրությունը, Պեյրուք, 1961, էջ 5000:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Ե., 1965:

<sup>7</sup> Որքան էլ փնտրեցինք, այս ընկերության մասին արհիվային վավերագրերում, ժամանակի նշանավոր գործիչների թողած հուշերում, գրագրություններում, և պատմագիտական ուսումնասիրություններում այլ տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել: Պարզապես կարելի է ենթադրել, որ այն Կարինի առավել ակտիվ երիտասարդների կողմից ստեղծված ընկերություն էր, որը նախատիպը եղավ և առաջին քայլը «Պաշտպան հայրենյացի» ստեղծման ճանապարհին և, որ վերջինիս կազմակերպական ու ծրագրային հիմնադրությունները եղել են նաև այս ընկերության հիմնական ուղենիշները:

նես Աստուրեան, Հաճի Յակոբ Մերինկիլեան, Ալեքսան Էթելէկեան, Տիգրան և Խաչատուր Կերեկցեաններ, Կարապետ և Յովհաննես Նշկեաններ, Աւետիս և Գէորգ Վէմեաններ»<sup>8</sup>:

Խաչատուր Կերեկցյանի ղեկավարությամբ և առենի Կարնո հայոց առաջնորդ Օրմանյան Եպիսկոպոսի օրհնությամբ կյանքի կոչված գաղտնի այդ կազմակերպությունը ուղղակիորեն ընդառաջում էր Բեռլինի վեհաժողովից հետո Խրիմյան Հայրիկի արձակած «Երկաթե Շերեփ» ունենալու պատգամին: Խրիմյանը, որ այդ օրերին Վանի հայոց առաջնորդն էր, իր հերթին սատար կանգնեց «Պաշտպան Հայրենեացի» ստեղծմանը:

«Հայրենասիրաց գաղտնի ընկերության» հենքի վրա Կարինում ստեղծված «Պաշտպան Հայրենյաց» ազատագրական-հեղափոխական կազմակերպության առաջնահերթ (մոտակա) նպատակն էր հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, իսկ վերջնական նպատակը՝ սեփական ուժերով Հայաստանի անկախության վերականգնումը:

Ընկերությունը նպատակ ուներ առողջ, համարձակ, խելացի, ուժեղ և վստահելի հայ երիտասարդներին համախմբել նույն տեսլականի շուրջ, զոյացնել հավատավոր և նույն գաղափարի համար զոհողությունների պատրաստ թիմ: Այնուհետև միջոցներ հայթհայթել, զենք ձեռք բերել և զինել ու զինավարժությամբ այն գործածելուն վարժեցնել նախ իրենց խմբի անդամներին, իսկ այնուհետև՝ իրենց համակիր ողջ երիտասարդությանը, որպեսզի նրանք ի վիճակի լինեին պաշտպանել «ինքզինքնին հարստահարիչներուն և սպաննիչներուն դէմ երբ առիթը ներկայանայ»<sup>9</sup>:

«Պաշտպան Հայրենյաց» հեղափոխական ընդհատակյա կազմակերպությունը հատկանշվում էր զինվորական կառույցով ու երկաթյա կարգապահությամբ: Ծրագրով այն զուտ ազգային-ազատագրական գաղափարներին հետամուտ շարժում էր և առաջադրում էր երիտասարդներին զինել և պատրաստել համաժողովրդական ապստամբության՝ հորիզոնում ունենալով օսմանյան-սուլթանական կարգերի տապալումը և հայոց ազգային պետականության վերականգնումը:

Ընկերության յուրաքանչյուր անդամ ստորագրում էր հատուկ այդ նպատակով մշակված երդմագիր, որով պարտավորվում էր քաղաքական ազատություն ձեռք բերելու համար բացարձակ գաղտնապահությամբ և կատարյալ անձնագոհությամբ կատարել ընկերության բոլոր հրահանգները:

Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում էր յոթ հոգուց բաղկացած Գերագույն խորհուրդը (Խաչատուր Կերեքցյան, Հակոբ Իշգալացյան, Ալեքսան Էթելիկյան, Հովհաննես Աստուրյան, Եղիշե Տուրսունյան, Կարապետ և Հակոբ Նշկյաններ և ուրիշներ)<sup>10</sup>: Անդամներն իրավասություն ունեին հեղափոխական այս գաղտնի ուխտին միանալու անհատական երդում վերցնել կամավոր հայ երիտասարդներից: Նորագիր յուրաքանչյուր հեղափոխական իր երդումով հանձնառության տակ էր մտնում իր շուրջը խմբելու տասը հոգիանոց ուխտյալներ, որոնք միասնաբար պիտի կազմեին «Պաշտպան Հայրենյաց»-ի մի բջիջ՝ հրամանատար ունենալով իրենց անդամագրող հեղափոխականին:

Անդամներն էին մտավորականներ, արհեստավորներ, երկրագործներ՝ կազմված տասնյակների համակարգով: Կազմակերպությանը հովանավորում էր Կարինի հոգևոր առաջնորդ Մաղաքիա Օրմանյանը: «Պաշտպան հայրենյացն» իր մասնաձյուղերն ուներ Արևմտյան Հայաստանի մեծ մասում, որի շատ քաղաքներում ստեղծվել էին հեղափոխական խորհուրդներ: Սերտ կապեր էին հաստատվել արևելահայերի հետ:

Կազմակերպությունը միասնական ուժերով թուրքական բռնատիրությունը թոթափելու կոչերով թռուցիկներ էր տարածում: «Պաշտպան հայրենյացի» «արմատական» թևը, ազատագրության միակ ուղին համարելով զինված ապստամբությունը, կողմ էր անհապաղ զինված ելույթին, իսկ «չափավոր» թևի կարծիքով՝ զինված ելույթը պետք էր իրականացնել մանրակրկիտ և երկարատև նախապատրաստությունից հետո միայն:

Ժողովրդի ինքնապաշտպանության համար զենք հայթհայթելու նպատակով «Պաշտպան հայրենյացը» փորձել է նյութական միջոցներ գտնելու նպատակով կապեր հաստա-

<sup>8</sup> ՀԱՄ Ծ. 420, ց.16, գ. 8, թ. 52:

<sup>9</sup> ՀԱՄ Ծ. 420, ց.16, գ. 8, թ. 52:

<sup>10</sup> Տե՛ս **Նշկեան Յ.**, Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ գարթօնքեն, Ֆրեզնօ, 1930, էջ 110:

տել հայ քաղաքական և կրոնական գործիչների՝ Մ. Խրիմյանի Գ. Արծրունու, Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի և հայկական համանման կազմակերպությունների հետ:

1882 թ. նոյեմբերին ոստիկանությունը հայտնաբերել է կազմակերպությունը: Ձերբակալվեց 72 մարդ: 1883 թ. ամռանը տեղի է ունեցել դատը՝ հայերի առաջին քաղաքական դատավարությունը Օսմանյան կայսրությունում: Հիմնադիր անդամները դատապարտվել են 5-15 տարվա բանտարկության: Նրանց մեծ մասը 1884թ. ներում է ստացել: Միայն Խ. Կերեքցյանը և Ա. Էթալիկյանը բանտում մնացին մինչև 1886 թ. սեպտեմբերը: Բանտից ազատված Խ. Կերեքցյանը և Հ. Իշղալացյանը փորձեցին վերականգնել կազմակերպությունը, բայց Կարինի զինված ելույթի ճնշումից հետո անհաջողության մատնվեցին: Չնայած քաղաքական ասպարեզից հեռանալուն՝ «Պաշտպան Հայրենյացը» կարևոր դերակատարում ունեցավ արևմտահայ ազգային-ազատագրական շարժման համար՝ իր գործունեությամբ նշանավորելով օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարի նոր շրջանի սկիզբը և գաղափարական ու կազմակերպական հիմք դառնալով մոտ ապագայում կուսակցությունների ստեղծման համար:

Հայության կյանքում սկսվեց մի շրջան, որը նշանավորվեց կազմակերպական բարձրագույն տեսակի՝ կուսակցությունների ասպարեզ իջնելով, որը ազգային-ազատագրական պայքարին նոր որակ հաղորդեց և ավելի հստակ խնդիրներ առաջադրեց ժողովրդին:

1885 թ. հիմնադրված հայ առաջին՝ **Արմենական կուսակցության** պատմության և ծավալած գործունեության մասին գրվել են զգալի թվով ուսումնասիրություններ<sup>11</sup>, որտեղ, սա-

<sup>11</sup> Տե՛ս **Համբարյան Ա.**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990: **Նաթանեան Մ.**, Արմենական կուսակցությունը, ծագումն սկսեալ մինչև Մահմանադրական Ռամկավար կուսակցության կազմալուծումը, խմբագրություն է և ներածություն Տիգրան Գեորգեանի, Գահիրե, 1990: **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցություն, Պեյրուք, 1985, **Ուզունեան Հ.**, Արևմտահայ ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցության մեջ և Ռամկավար Ազատական Կուսակցությունը իր 60-ամեակին, Լոս Անձելես, Գալիֆորնիա, 1986: **Մարգարյան Մ.**, Հայ Մահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ., Ե., 2009, նույնի՝ «Արմենիա» պարբերականը հայ ազատագրական պայքարի ակունքներում, Ե., 2014, նույնի **Կարապետյան Ա.**, Արմե-

կայն, չի հիշատակվում արմենականների և Կարինում գործող կազմակերպությունների ու կարինահայության հետ ունեցած առնչությունների մասին: Մեր փնտրտուքների արդյունքում որոշ աղոտ և վիճելի ակնարկների հանդիպեցինք արխիվային մի քանի վավերագրերում<sup>12</sup> և կուսակցության պատմագիր-տեսաբան Արտակ Դարբինյանի և արմենական նշանավոր ֆիդայի Արմենակ Եկարյանի հուշագրություններում<sup>13</sup>:

Ա. Դարբինյանի հայտնած հետևյալ տեղեկությունը, որ «Տարիներ է ի վեր Կ.Պոլսին Կիլիկիա, Փոքր Հայքն մինչև Մուշ եւ Կարին կայծկլտացող տարերային ըմբոստութեան մասնակի պոռթկումները եկեր ձեւաւորուեր էին հայակեղրոն Վանի մէջ եւ ծնունդ տուած յեղափոխական կազմակերպութեան մը, որ մկրտուեցաւ «Արմենականութիւն» անունով»<sup>14</sup>, անուղակի հուշում է, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը մեկ ամբողջական երևույթ էր, իսկ երկու միմյանց հարևան ու Ռուսահայաստանին սահմանակից գավառներում այդ շարժումն անկասկած առնչություններ ու շփումներ կունենար: Այդ տեսակ անուղակի, սակայն իրականությանը շատ մոտ ևս մի վկայություն. «Սուլթանական կառավարութեան համար անհանդուրժելի էր Ռուսիոյ սահմանակից դարձած երկու նահանգներու՝ Էրզրումի եւ Վանի մէջ Հայերու կեղրոնացումը եւ անոնց շրջահայեաց կեցուածքը: Հայակեղրոն Էրզրումի նահանգին ջարդերէն յետոյ կարգը պիտի գար Վանին»<sup>15</sup>: Այսինքն՝ իշխանություններն անգամ նույն հարթության վրա էին դիտարկում և անմիջական կապ տեսնում այդ շարժման՝ տարբեր երկրամասերում դրսևորումների միջև, քանի որ դրանք ունեին միևնույն գաղափարախոսությունը, նպատակները, գործելակերպը, միջոցներն ու հիմնական շարժիչ ուժերը:

Մի անչափ կարևոր հանգամանք էլ փաստում է այդպիսի ընդհանրության մասին: Այսպես, հայտնի իրողություն է, որ մինչև կուսակ-

նական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 1995:

<sup>12</sup> **ՀԱԱ**, Անուշավան Մկրտչյանի ֆֆ. 424 և 427

<sup>13</sup> **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Երևան, 2003: Եկարեան Ա., Յուշեր, Պեյրուք, 1985:

<sup>14</sup> **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 25:

<sup>15</sup> **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 34:

ցության հիմնումը Կ. Կամսարականի միջոցով (նա հաճախ կապավորի դեր էր կատարում տարբեր վայրերում հասարակական գործիչների միջև)<sup>16</sup> իրար հետ կապ էին հաստատել, բավականին ակտիվ հաղորդակցվել և համագործակցել Կարինի «Պաշտպան հայրենյաց» և Վանում գործող «Սև խաչ»<sup>17</sup> կազմակերպությունները: Ավելին, ըստ Օ. Ճգնավորյանի քսաներորդ դարավերջին բացահայտված արխիվային նյութերի՝ Վանի հայ երիտասարդության կազմած «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը «Պաշտպան Հայրենյացի» ճյուղավորումներից մեկն էր<sup>18</sup>: Հայտնի փաստ է նաև այն, որ թե՛ «Սև խաչի» և թե՛ արմենականների գաղափարական արմատները սնվում էին իրենց բեղուն կրթալուսավորչական և գաղափարաքաղաքական ու կազմակերպչական գործունեությամբ առանձնացած Մ. Խրիմյան-Մ. Փորթուգալյան փառավոր երկյակի ու նրանց համախոհների անդատանում: Երկու կազմակերպություններին էլ հովանավորում, դրամական և բարոյական օգնություն էին ցուցաբերում Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը, Կ. Կամսարականը և նրանց համախոհները<sup>19</sup>: Հետո էլ արմենականների զգալի մասը նախկին սևխաչականներ էին: Հետևապես, ի՞նչը կարող էր խոչնդոտել արմենականների և Կարինում գործող ազատագրական շրջանակների համագործակցությանը: Այս տեսակետն անուղղակի հաստատում է նաև Հ. Յ. Դաշնակցության նշանավոր գործիչ, տեսաբան և պատմագիր Մ. Վարանդյանը, ով, խոսելով 1890 թ. Հայաստանի «սրտին սրտին մեջ-իսկ Էրզրումում», իսկ այնուհետև Կ.Պոլսում տեղի ունեցած ցույցերի մասին, գրում է, որ դրանք «տեղի ունեցան Հնչակեաններու ձեռքով, արմենական գործիչներու աջակցությամբ և ուժեղ ցնցում պատճառեց

հայ շրջաններու»<sup>20</sup>: Այսինքն՝ արմենականների և Կարինի հեղափոխական ուժերի (որոնց օրգանական շարունակությունն ու ժառանգորդն այդ պահին հնչակյանները եղան) միջև համագործակցություն հաստատ եղել է: Այնպես որ, թեև մեզ չհաջողվեց ուղղակի վկայություններ գտնել Արմենական կուսակցության կողմից Կարինում գործունեություն ծավալելու մասին, սակայն կարելի է ենթադրել, որ այդպիսի առնչություններ, այնուամենայնիվ, եղել են, պարզապես դրանց մասին տեղեկությունները կամ չեն պահպանվել կամ ուղղակի մեզ չեն հասել:

Հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլում, երբ ազատագրական խմբակներին ու կազմակերպություններին փոխարինելու եկան քաղաքական կուսակցությունները, 1887 թ. ժննում (Շվեյցարիա) հիմնադրվեց **Հնչակյան** կուսակցությունը<sup>21</sup>: Հիմնադիր ղեկավարներն էին ռուսահայ մի խումբ հայ ուսանողներ՝ Ա. Նազարբեկ, Մ. Վարդանյան-Նազարբեկ, Գ. Կաֆյան, Ռ. Խանազատ և ուրիշներ: Կենտրոնական օրգանն էր «Հնչակ» թերթը: Կուսակցության սոցիալական հիմքը կազմում էին հայ հասարակության տարբեր խավերից սերված (ռազմոչին) մտավորակա-

<sup>16</sup> Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

<sup>17</sup> Կազմակերպության մասին տե՛ս **Կոստանյան Է.**, Գարեգին Մրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 126-134, Լույսի՝ Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 288-295, Լույսի՝ Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության /19-րդ դարի 80-ական թվականներ/, Երևան, 2005, 175 էջ:

<sup>18</sup> armenian-community.ge/News/954

<sup>19</sup> Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

<sup>20</sup> **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակություն (անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով հարստացած), Բ. հրատարակություն, Պեյրուք-2013, էջ42:

<sup>21</sup> Հնչակյան կուսակցության պատմությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Առաջին փորձը կատարել է **Հմայակ Արամյանցը** (Պատմություն հնչակեան կուսակցության, Կ.Պոլիս, 1918), որին հաջորդեց հնչակյան գործիչների վերաբերյալ հուշերի ժողովածուն (Հիւնամեակ 1887-1937 սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցության, Ֆրեզնո, 1938), այնուհետև՝ հայ ազատագրական շարժման հայտնի գործիչ **Մանուկ Ճիզմեճեանի** շահեկան ուսումնասիրությունը (Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, 1890-1925, Ֆրեզնո, 1930): Հնչակյան կուսակցության առաջին ամբողջական ուսումնասիրությունը **Արսեն Կիտուրի** գրչին է պատկանում (Պատմություն Ս.Դ.Հնչակեան կուսակցության, 1887-1962, Պեյրուք, հ. Ա, 1962 և հ. Բ, 1963): Կուսակցության 1887-1915 թթ. պատմությանը նվիրված հաջողված ուսումնասիրություն է նաև մերօրյա հետազոտող **Գեղամ Հովհաննիսյանի** աշխատությունը (Հնչակյան կուսակցության պատմություն 1887-1915 թթ.): Կուսակցության տարբեր տարիների պատմությանն ու գաղափարական, ծրագրային հիմնադրությունների մասին աշխատություններ են հեղինակել նաև **Ս. Մապահ-Գյուլյանը**, **Հ. Գանգրունին**, **Ա. Համբարյանը**, **Լ.Խուրշուդյանը**, **Ռ. Խուրշուդյանը**, **Մ. Ստեփանյանը** և այլ հեղինակներ:

նությունը, արհեստավորները, մանր առևտրականները, հայ քաղաքային և գյուղական մանր սեփականատերերը: «Հնչակ» թերթը սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության պաշտոնաթերթն էր: Կուսակցության գաղափարախոսության ձևավորմանը մեծապես նպաստեց հայ հասարական-քաղաքական մտքի հեղափոխական, դեմոկրատական հոսանքը (Մ. Նալբանդյան, Բաֆֆի) և Ա. Գերցենի ու նրա «Կոլոկոլի» («Колокол», այստեղից էլ՝ հայերեն «Հնչակը») գաղափարները և ռուսական հեղափոխական նարողնիկությունը: 1888 թվականին հրատարակված ծրագրում կուսակցության առաջնային նպատակ էր համարվում համազգային ապստամբությամբ թուրքական բռնատիրությունից Արևմտյան Հայաստանի ազատագրումը, հայկական հողերի միավորման միջոցով անկախ հանրապետության ստեղծումը: Հնչակյանների վրա որոշակիորեն ազդել է նաև ժնևում գործող Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրության» խումբը, որի անդամների հետ կապ էին պահպանում հնչակյանները:

Միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման աշխուժացման պայմաններում հնչակյանները նարողնիկական տիպի ազգային սոցիալիստական կուսակցությունից վերաճում էին ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցության: Կուսակցության ծրագրում սոցիալիզմի մասին հողվածի առկայությունը հետագայում պատճառ դարձավ կուսակցության պառակտմանը: Այն հնչակյանները, որոնք հանդես էին գալիս միայն ազգային խնդիրների իրականացման պահանջով, 1896 թ. անջատվեցին և ձևավորեցին առանձին՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Կուսակցության ծրագրի համաձայն՝ հնչակյանների գործունեության առանցքը հայկական հարցն էր: Ազգային ճնշման դեմ իրենց մարտավարական նկրտումներում հնչակյանները համատեղում էին խաղաղ քաղաքական ցույցերը և զինված հայդուկային ելույթները: Թեև հնչակյանները գտնում էին, որ «ատրճանակի մի կրակոցը Կ. Պոլսում ավելի մեծ արձագանք կունենա, քան հրանոթների որոտը Արևմտյան Հայաստանում»<sup>22</sup>, այ-

նուամենայնիվ, XIX դ. 80-90-ական թթ. Արևմտյան Հայաստանում ստեղծեցին իրենց կազմակերպությունները և անցան լայն գործունեության: Կարճ ժամանակամիջոցում հնչակյան կազմակերպություններ ստեղծվեցին Թուրքիայում (114), ԱՄՆ-ում (86), Ռուսաստանում (36), Իրանում (15), Բուլղարիայում (9), Ռումինիայում (7), Եգիպտոսում (6) և այլուր<sup>23</sup>:

Հնչակյան կուսակցության կանոնադրության համաձայն՝ կուսակցության Կենտրոնական վարչությունը պետք է գտնվեր Հայաստանի<sup>24</sup> տարածքում. «Գործունեության ասպարեզը լինելով թիրքաց Հայաստանը, բնականաբար, և կազմակերպութունն էլ պիտի այնտեղ հաստատվե»<sup>25</sup>: Նկատի ունենալով, որ Հայաստանի տարածքում կուսակցությունը դեռևս «չէր կազմակերպուած՝ կորոշուի ժամանակատր կերպով զայն հաստատել Տրապիզոն»<sup>26</sup>, որը թեև մայր երկրի սահմաններում չէր, սակայն սահմանակից էր նրան և բազմատեսակ ինտենսիվ կապեր կային: Այդ պատճառով էլ կուսակցության ղեկավարությունը նախապես որոշել էր, որ հնչակյան մասնաճյուղերի մեջ ղեկավար դերը պետք է պատկաներ Օսմանյան կայսրության տարածքում առաջինը Տրապիզոնում հիմնադրված և իր կազմավորման օրից «Երկրի կեդրոն» անվանված տեղական մասնաճյուղին, թեև գործնականում այդ դերը վիճակված էր Կ. Պոլսի հնչակյան վարչությանը: Միաժամանակ նշենք, որ Տրապիզոնին մոտ գտնվող հայաշատ ու արդեն իսկ «յեղափոխական» կազմակերպություն ունենալու փորձ ունեցող Կարինը ևս հենց սկզբից գտնվում էր հնչակյանների ուշադրության կենտրոնում: Ուստի պատահական չէր, որ կուսակցության առաջին մասնաճյուղերից մեկը հիմնադրվեց հենց այդտեղ:

Արևմտահայության ազատագրության խնդիրը և հնչակյանների ձեռնարկած քարոզչական-բացատրական աշխատանքներն ավելորդումներ էին առաջացրել նաև արևելահա-

<sup>22</sup> Յիսնամեակ Սօց. Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան /1887-1937/, խմբ. Ստ. Սապահ-Գիլեանի, Փրովիտենս, 1938, էջ 67:

<sup>23</sup> Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան /1887-1962/, հատ. Ա., խմբ. Ա. Կիտուր, Պէյրուք, 1962, էջ 42:

<sup>24</sup> Մինչև Հայաստանի Առաջին հանրապետության հռչակումը Հայաստան ասելիս նկատի էր առնվում բացառապես Արևմտյան Հայաստանը:

<sup>25</sup> Հնչակ, սեպտեմբեր, 1888, էջ 9:

<sup>26</sup> Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պէյրուք, 1962, էջ 49:

յութան մեջ: Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներից՝ «Ռոսթովեն, Արմաիրեն, Ախալցխայեն, Ալեքսանդրապոլեն և ուրիշ տեղերե՛ Մշոյ Սուրբ Կարապետ վանքը «ուխտի» երթալու համար»<sup>27</sup> և զանազան այլ պատրվակներով քողարկվելով, մեծ թվով երիտասարդներ, ոգևորվելով արևմտահայ եղբայրներին ազատելու մտքից, խմբեր էին կազմավորում և մեկնում Արևմտյան Հայաստան: «Ուխտավորների» այդպիսի մի խմբի, որ «իրենց հետ Հայաստան կը տանէին Ռաֆֆիի գործերը, որոնք հոն ձեռքէ ձեռք կը խլուէին»<sup>28</sup>, երգրումում միանում է քաղաքի մեծահարուստներից Մարտիրոս Սահաթճյանը: Վերջինս «խիստ կոգեւորուի և կը խոստանայ իր վերադարձին երգրումի մէջ եւս մասնաճիւղ մը կազմիլ»<sup>29</sup>: Կուսակցության կենտրոնի որոշումով պետք է մասնաճյուղերի լայն ցանց ստեղծվեր Երկրում. «Յեղափոխական շրջաններ պետք է կազմվեն երկրի որքան կարելի է շատ կետերի վրայ, այսպէս ասած պետք է երկիրը ծածկեն իրենց ցանցով»<sup>30</sup>: Ելնելով դրանից՝ հնչակյանները բավականին ակտիվ քայլեր են ձեռնարկում Կարինում կուսակցության մասնաճյուղ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով 1889 թ. Կարին են մեկնում Ռաֆայէլ Մովսիսյանը և Ալեքսան Ռոստոմյանը: Այստեղ նրանք ծանոթանում են «Պաշտպան հայրենյացի» հիմնադիր-ղեկավար Խաչատուր Կերեկցյանի եղբոր՝ Տիգրան Կերեկցյանի հետ, որը դեռ Կարին մեկնելուց առաջ Չագրյանի հանձնարարականով ներկայանում է Խանազատին: Հանդիպման ընթացքում Խանազատը Կերեկցյանի «միտքը կը մշակէ Հնչակեան նոր գաղափարաբանութեամբ»<sup>31</sup>, ծանոթացնում է նրան կուսակցության ծրագրին և հորդորում՝ Կարին վերադառնալուց հետո ինքը ևս ձեռնարկի կազմակերպչական աշխատանքներ կուսակցության մասնաճյուղ հիմնելու նպատակով: Միաժամանակ Կերեկցյանին պարզաբանում է, որ մշտապես հարկավոր է աչքաթող չանել հարևան ժողովուրդներին և ապահովել դրանց՝ «թուրքերու, քիւրտերու,

յոյներու գործակցութիւնը հասարակաց թշնամիին՝ թուրք կառավարութեան դէմ»<sup>32</sup>:

Շուտով Տիգրան Կերեկցյանը վերադառնում է Կարին և, «իրեն գործակից ունենալով Գրիգոր Չիլինկիրեան, Յակոբ Իշգալացեան, Սահաթճեան»<sup>33</sup>, ձեռնարկում է կազմակերպչական լուրջ աշխատանքներ, որոնց արդյունքում ստեղծվում է տեղի հնչակյան մասնաճյուղը: Այդ աշխատանքներին իրենց ակտիվ մասնակցությունն են բերում նաև զգալի թվով տեղացի եռանդուն երիտասարդներ: Մասնաճյուղի գաղափարական ու գործնական ղեկավարը, նախաձեռնությունների մեծ մասի հեղինակն ու ոգին Գևորգ Չիլինկիրյանն էր. «Այդ շրջանին Հնչակեան կուսակցութիւնը երգրումի մէջ իր առաջին խումբը կազմեց **15 ղեկուեմբեր 1890-ին**<sup>34</sup> Գրիգոր Չիլինկիրեանի միջոցաւ»<sup>35</sup>: Հիմնականում հնչակյան հիմնադիր-ղեկավարներից Ռուբեն Խանազատի հրահանգով ու գաղափարական ուղղորդմամբ ստեղծված այս մասնաճյուղն սկզբնական շրջանում «դրական արդիունք մը չունեցաւ Հայրենասիրաց Գաղտնի ընկերութեան ուժեղ դիրքին բերմամբ»<sup>36</sup>, սակայն շարունակական համառ քարոզչությամբ մասնաճյուղի անդամներն աստիճանաբար սկսեցին ազդեցություն ձեռք բերել տեղի գործիչների և հանրության շրջանում:

Հնչակյան կենտրոնը, կարևորելով Կարինի մասնաճյուղի գոյությունը և փորձելով ուժեղացնել այն, այդ շրջանում Տրապիզոնի ամենաեռանդուն կուսակցականներից Գրիգոր Վարդանյանին հանձնարարում է մշտական կապ պահպանել Կարինի մասնաճյուղի հետ: Արդյունավետ քարոզչություն իրականացնելու նպատակով Գ. Վարդանյանն իր խմբից մեկին հանձնարարում է պարբերաբար անհրաժեշտ գաղափարախոսական գրակաություն հասցնել Կարին: Այդ նպատակով

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Հնչակ, սեպտեմբեր, 1888, էջ 9:

<sup>31</sup> Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրուփ, 1962, էջ 51:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Հայտնի փաստ է, որ Կարինում 1890 թ. ամռանը տեղի ունեցած դեպքերին ակտիվորեն մասնակցել ու ղեկավար դերակատարություն են ունեցել տեղի հնչակյանները: Այսինքն՝ ղեկուեմբերից մի քանի ամիս շուտ արդեն Կարինում հնչակյաններ գործում էին: Ակնհայտ է, որ Օ. Ճգնավորյանը նկատի ունի Հնչակյան կուսակցության Կենտրոնի կողմից պաշտոնապես ճանաչված մասնաճյուղի ստեղծման փաստը:

<sup>35</sup> ՀԱՍ. Ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 64:

<sup>36</sup> Նույն տեղում:



նրան վարժեցնում են «կարաւանապետութեան» և ապրանքները փոխադրելու համար տրամադրում են մի ավանակ: Տրապիզոնից Կարին երթնելով «քարավանի» բեռների հիմնական մասը «Հնչակ» թերթի կապոցներն էին և համապատասխան նամակներն ու այլ փաստաթղթեր:

Կարինում Հնչակյան կուսակցության առաջին մկրտությունն ու փորձությունը եղան հունիսյան դեպքերը: 1890 թվականի հունիսին Կարինում կեղծ լուրեր են տարածվում հայերի ապստամբության պատրաստվելու մասին: Այդ կեղծ ահազանգի հիման վրա, Բարձր Դոնից ստացված հրամանով խուզարկելու նպատակով թուրք ոստիկանները պատարագի ժամին ներխուժում են եկեղեցի: Դա շատ ծանր տպավորություն է թողնում տեղի հայության վրա, մասնավորապես՝ հնչակյան գաղափարներով տոգորված երիտասարդությունն ընդվզում և բողոքում այդ անօրինականության դեմ: 1890 թ. հունիսի 18-ի վաղ առավոտյան ժողովուրդը հավաքվում է եկեղեցու բակում, որպեսզի արգելի ծրագրված խուզարկությունը: Հուշագիրների վկայությամբ՝ Հակոբ Իշղալացյանի (որ «Պոլիս երթալ-գալով Հնչակեան արձանագրուած էր Աչգպաշեանի ձեռքով»<sup>37</sup>) ղեկավարությամբ «երիտասարդներէն ոմանք կը զինուին ատրճանակներով»: Վաղ առավոտյան երեսուն ոստիկան ներխուժում են եկեղեցու բակ և փորձում մտնել եկեղեցի: Մի քանի պատվարժան հայեր դիմում են ոստիկանապետին, որպեսզի վերջինս հետ տանի ոստիկաններին և հրաժարվի խուզարկելու մտքից: Բանակցությունները դեռ չվերջացած՝ ձերբակալված հայ երիտասարդներից մեկը ոստիկանից ձերբագատվելու մտադրությամբ ատրճանակից օդ է կրակում: Այդ կրակոցն էլ առիթ է դառնում և ոստիկաններն սկսում են կրակել հայերի վրա: Մպանվում և վիրավորվում են քսան հայեր և մեկ ոստիկան:

Կարինում, որտեղ թուրքերն անհամեմատ շատ էին, քան հայերը, հաստատվել էին նաև «ամէն տեսակ գիշատիչներ՝ լազեր, չերքեզներ, թարաքամաներ, քրդեր»<sup>38</sup>: Նրանք բոլորն էլ դեմ էին տրամադրված և միշտ հարմար առիթի էին սպասում հայերին թալանելու և կոտո-

րելու համար: Այդ պատճառով էլ փոխանակ միջնորդէին ու կանխէին արյունահեղությունը, ավելի էին գրգռում զինվորներին ու մոտակայքում խոնված ամբոխին: Նույնիսկ այդ արյունահեղությունը ետ չի պահում թուրք ժանդարմներին խուզարկության մտքից, ինչին էլ նրանք ձեռնամուխ են լինում անմիջապես: Խուզարկվում են Ս. Աստվածածին եկեղեցին, առաջնորդարանը և Սանասարյան վարժարանը: Սակայն խուզարկության արդյունքում ոչինչ չի հայտնաբերվում: Եկեղեցի եկած բազմությունը՝ «Պաշտպան հայրենյացի» ղեկավարներ Խ. Կերեքցյանի, Գ. Չիլինկիրյանի և Հ. Իշղալացյանի գլխավորությամբ դիմադրում է ոստիկաններին: Շուրջ 20 հայեր սպանվեցին ու վիրավորվեցին: Երկու օր անց՝ հունիսի 20-ին, իշխանությունների հրահանգով ջարդեր են կազմակերպվում քաղաքի հայկական թաղամասերում: Այնուհետև իշխանությունները սկսում են ձերբակալություններ՝ շատ դեպքերում հաշվի չառնելով նույնիսկ դիմացինը որևէ մեղք գործել է, թե՛ ոչ: Դպրոցի տեսուչ և ցույցի ամենակատիվ գործող անձերից Գ. Չիլինկիրյանը ծածուկ հեռանում է Թիֆլիս, իսկ ցույցը կազմակերպող հնչակյաններ Կերեքցյանը, Իշղալացյանը, Սահաթճյանը, Նշկյանը «կը կորսնցնեն իրենց հետքերը»<sup>39</sup>:

Կարինի դեպքերը, որպես ազատության համար բողոքի պողոթնում, մեծ արձագանք գտան ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության շրջաններում: Հայությունը ցնցված էր մինչ այդ չտեսած գազանություններից, որ իրականացրին իշխանությունները Կարինում. «կոտորածից առաջ նա դժուարութեամբ էր իրեն թոյլ տալիս մտածելու, որ կառուարութիւնը ընդունակ է մի այդպիսի սոմարդի եւ միեւնոյն ժամանակ գազանական գործողութեան»<sup>40</sup>: Այդպիսի ոճիր, որ մարդկության պատմության մեջ տեղի ունեցած բացառիկ դեպքերի շարքին կարելի է դասել, հայ ժողովուրդը նույնիսկ սուլթանական «ապուշ եւ վայրենի» կառավարությունից չէր սպասում: «Կարինում տեղի ունեցած ոճիրը, գրում է Հնչակի թղթակիցը, նաև ցույց տվեց, որ յանկարծակի գրգռվիլը, առանց նախապատրաս-

<sup>37</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրուօ, 1962, էջ 51:

<sup>38</sup> Ռոստոմ մահուան վաթսունամեակին առթիւ, խմբագիր Հ. Տասնապետեան, Պեյրուօ, 1979, էջ 50:

<sup>39</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրուօ, 1962, էջ 52:

<sup>40</sup> Ռոստոմ մահուան վաթսունամեակին առթիւ, խմբագիր Հ. Տասնապետեան, Պեյրուօ, 1979, էջ էջ 50-51:

տութեան հարձակիլը անբարեհաջող ավարտ կունենայ»<sup>41</sup>: Միննույն ժամանակ, քննարկելով ու վերլուծելով տեղի ունեցածը՝ Հնչակը եզրակացնում էր, որ «դժուար չէ նկատել, որ թիւրք կառուարութեան գաղտնի նախագծով ու դրդումով է առաջացել այդ դէպքը, որ նա այնտեղ խաղացել է պրովոկատորի դեր իսկ միւս կողմից՝ հայ ժողովուրդը տրամադիր է եղել կառուարութեան զցած մարտական ձեռնոցն ընդունել բաւական սպառնական եղանակով»<sup>42</sup>:

Հայությունը, տեսնելով քրիստոնյա մեծ տերությունների բացարձակ անտարբերությունը և այն, որ «դէպքերէն յետոյ առհասարակ զայրոյթ ծագեցաւ տաճկաց մէջ ընդդէմ քրիստոնէաներու, մասնաւորապէս, ի հարկէ, հայոց»<sup>43</sup>, «ինքզինք բոլորովին լքուած զգաց»<sup>44</sup>: Իսկ Տրապիզոնում գտնվող Հնչակյան կենտրոնական վարչությունը որոշում է մեծ ցույց կազմակերպել Կ. Պոլսում, որի նպատակն էր բողոքել Կարնո ապօրինի խուզարկությունների և ձերբակալությունների դեմ և եվրոպական դեսպանների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: «Մենք համոզումն ունէինք, գրում է Խանազատը, թէ Էրզրումի եվրոպական հիւպատոսները իսկոյն ահագանգ պիտի հնչեցնէին այդ դէպքի առիթով եւ «հայկական հարցը» պիտի հրապարակ գար ու շուտով իր լուծումն ստանար»: Երկար քննարկումներից հետո վարչությունը հանգում է այն եզրակացության, որ «եվրոպական պետությունների իրանց քար անտարբերութիւնից դուրս հանելու համար անհրաժեշտ է մի ցույց կազմակերպել հէնց սուլթանի մայրաքաղաքում, դեսպանների քթի տակ»<sup>45</sup>:

Հնչակյանները 1890 թ. հուլիսի 15-ին խաղաղ ցույց կազմակերպեցին Կ. Պոլսում, որը ստացավ Գում Գափուի ցույց անունը, այն թաղամասի անունով, որտեղ գտնվում էին Հայոց մայր եկեղեցին և առաջնորդարանը: 1890 թ. հուլիսի 15-ն Կ. Պոլսի Գում-Գափու թաղամասում տեղի է ունենում բողոքի խաղաղ ցույց, որը իշխանությունների նախաձեռ-

նությամբ վերածվում է կոտորածի: Թէն «Հնչակ» թերթը Լոնդոնից փառաբանում էր ցույցի ղեկավարներ ու գլխավոր գործող անձինք Հ. Ճանկույանին, Մ. Տամատյանին, Մուրադին և հայտարարում՝ մատնիչների ահաբեկման ու մոտալուտ հաջողությունների մասին<sup>46</sup>, սակայն իրողությունն այն էր, որ հերթական անգամ հեղվեց անմեղ հայ մարդկանց արյունը և հերթական անգամ՝ անարդյունք: Կարինի դէպքերից հետո Գում Գափուի ցույցը հնչակյանների կազմակերպած առաջին զանգվածային ելույթն էր:

Հայ հեղափոխական **դաշնակցություն** կուսակցությունն ստեղծվել է 1890 թ. Թիֆլիսում: Հիմնադիրները և առաջին ղեկավարներն էին Քրիստափոր Միքայելյանը, Միմոն Զավարյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմ): 1890 թ. սեպտեմբերին հրապարակված ՀՅԴ մանիֆեստում նշված է, որ նոր ստեղծված կուսակցության նպատակն էր համախմբել հայ ժողովրդի ուժերը, ձեռք բերել քաղաքական և տընտեսական ազատություն Արևմտյան Հայաստանի համար: Հաշվի առնելով հայ իրականության առանձնահատկությունը՝ հայ բնակչության սփռվածությունը, կուսակցության կազմակերպական կառուցվածքում որդեգրեց ապակենտրոնացման սկզբունքը:

19-րդ դարի 90-ական թվականների առաջին կեսը Հ.Յ. Դաշնակցության Արևմտյան Հայաստան մուտք գործելու առաջին, նախնական ժամանակահատվածն էր: Այդ շրջանում Վասպուրական, Տարոն և Բարձր Հայք անցած կուսակցության լիազոր - ներկայացուցիչների շուրջ ձևավորվում են Հ.Յ. Դաշնակցության առաջին ոչ մեծ կորիզները, որոնք արդեն 1890-ական թվականների երկրորդ կեսին ձեռք են բերում ավելի հստակ կազմակերպական կառույցի տեսք: 1890-ականների առաջին կեսին վերջիններիս շարքում առավել ուժեղ, բազմամարդ ու գործունյա միջուկը ձևավորվել է Կարինում և նրա շրջակա գյուղերում: Դա պայմանավորված էր նրանով, որ Կարինում 1880-ական թվականների երկրորդ կեսին սկիզբ էր առել խոսքից գործի անցնելու և արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր խմբակներն ու կազմակերպությունները միավորելու բավականին ինքնաբերական շարժում, որն անհրաժեշտ ենթահող

<sup>41</sup> Հնչակ, 1890, հուլիս, թիվ 3, էջ 1:

<sup>42</sup> Հնչակ, 1890, հուլիս, թիվ 3, էջ 12:

<sup>43</sup> Հնչակ, 1890, օգոստոս, թիվ 4, էջ 7:

<sup>44</sup> Պատմութիւն Մ. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա. Պեյրույթ, 1962, էջ 52:

<sup>45</sup> **Խանազատ Ռ.**, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», Բոստոն, 1927, թիվ 1, էջ 124:

<sup>46</sup> Հնչակ, 1890, թիվ 6, 14 սեպտեմբեր:

էր ստեղծում Հ. 3. Դաշնակցության ծավալման ու ընդարձակման համար:

Այդ շարժման առանցքում 1886 թ. բանտից ազատված «Պաշտպան հայրենյացի» առաջնորդներն էին՝ Խաչատուր Կերեկցյանի գլխավորությամբ, որոնք, որոշակի կապեր հաստատելով, մի կողմից Կ.Պոլսում գործող Վարիչ Մարմնի և նրա միջոցով Հնչակյան կուսակցության հետ<sup>47</sup>, և մյուս կողմից էլ, նախապատրաստվելով 1890 թ. սեպտեմբերին Էջմիածնում նախատեսված մյուռոնօրհնության առիթով Անդրկովկասում հավաքվելու հարմար պահին, ցանկանում էին այն օգտագործել արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր կազմակերպություններին ու անհատներին համախմբելու համար:

1890 թ. հունիսի 18-20-ին տեղի ունեցած Էրզրումի առաջին ցույցն ու ընդհարումը ոչ միայն «Պաշտպան հայրենյացի» հին գործիչների համախմբման և նրանց ժամանակավորապես նեղացած շրջանակի ընդլայնման լավագույն առիթը դարձան, այլև խթան հանդիսացան Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած «Գում Գափուի» ցույցի և վերջինիս անմիջական տպավորության տակ Թիֆլիսում սկիզբ առած Հայ հեղափոխականների դաշնակցության հիմնադիր ժողովների համար: Այսպիսով, հայ ազատամարտի ղեկավար ուժը դարձած Հ. 3. Դաշնակցության ձևավորման գործում հենց Էրզրումից հնչած ազդանշանն էր, որն առաջ բերեց մի յուրահատուկ շղթայական ռեակցիա՝ արագացնելով աշնանը Էջմիածնում նախատեսվող տարբեր կազմակերպությունների ու կուսակցությունների համախմբման ձեռնարկը:

1890 թ. հուլիսի երկրորդ կեսին և օգոստոսին Թիֆլիսում տեղի ունեցած Հ. 3. դաշնակցության հիմնադիր ժողովներից անմիջապես հետո՝ սեպտեմբերի սկզբներին, իր գործունեությունն սկսած Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Կենտրոնը» իր

անդամներից Լևոն Մարգարյանի վկայությամբ Էրզրումում ներկայացուցիչ նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից Հովհաննես Աստուրյանին<sup>48</sup>: Դրանով պայմաններ ստեղծվեցին «Պաշտպան հայրենյացի» մեջ մտած գործիչների՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության շուրջ համախմբվելու համար: Սակայն այդ բնականոն գործընթացի ծավալման ճանապարհին լուրջ արգելք դարձավ այն փաստը, որ «Կենտրոնի» Էրզրումի գործիչների վրա հենվելու որդեգրած մարտավարությանը զուգընթաց, արձանագրվեցին նաև Կովկասից ժամանող և տեղական պայմաններին անծանոթ «առաջին առաքյալների» ակտիվ ու հախուռն քայլերը, որոնք հակասություններ ծնեցին հայ ազատամարտը ներկայացնող երկու տարբեր սերունդների միջև:

Պատմագիտական գրականության մեջ հսկայական քանակությամբ փաստագրական նյութ կա, որում ներկայացված է կովկասահայության գործուն մասնակցությունը արևմտահայ ազատամարտին: Սակայն, քանի որ այդ հայդուկ-ազատամարտիկների կենսագրականներում միշտ չէ, որ կարելի է գտնել վկայություններ նրանց իսկական անուն-ազգանունների, ծննդյան վայրերի մասին, շատ գործիչների ով և որտեղից լինելը մնացել է անհայտ<sup>49</sup>: Սակայն հուշագրերի թողած տեղեկություններից և ՀՅԴ-ի արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից հայտնի է, որ Անդրկովկասից Էրզրում անցած Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին գործիչը՝ Տիգրան Օրոնյան-Շամիրն էր (1868-1894 թթ.): Նա նաև առաջինն էր, որ թուրքերից ու քրդերից վրեժ լուծելու համար զինված խումբ մտցրեց Արևմտյան Հայաստան: Նա գործել է Կարինում և, այդ գործում որպես առաջնեկ, նշանակալի հետք թողել այդ տարածաշրջանում հետագա ազատագրական պայքարի պատմության մեջ: Ապրեց ընդամենը 26 տարի, բայց բուռն հանրային գործունեություն ունեցավ, սակայն ում անունն այսօր՝ քչերին է

<sup>47</sup> Թեև «Պաշտպան հայրենյացի» գործիչներից Գր. Չիլինկարյանը նամակագրական կապ էր հաստատել Հնչակյան կուսակցության առաջնորդներից մեկի՝ Ռուբեն Խանազատի հետ, բայց Էրզրումում Հնչակյան կուսակցության մասնաճյուղի ձևավորման մասին վերջինիս վկայությունը լուրջ կասկածներ է հարուցում: Եթե անգամ ստեղծվել էր նման մասնաճյուղ հիշեցնող մի բան, ապա միայն թղթի վրա, քանի որ 1890 թ. հունիսի 6-8-ի հայտնի ցույցի և ընդհարման առանցքում կրկին «Պաշտպան հայրենյացի» հին գործիչներն էին գտնվում:

<sup>48</sup> Մարգարյան Լ., Հուշեր 1889-1892 թվականներից /ՀՀԴ ծագումը, առաջին քայլերը և Ա. ընդ. ժողովը/, ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 132:

<sup>49</sup> Մեթրոնյան Ա., Ջավախքը XIX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 243-244:

հայտնի<sup>50</sup>: ՀՅԴ հիմնադիրներից Մ. Շաթիրյանը հուշագրում է, որ առաջին շրջանում բացի վիճող, բանախոսող ու ծրագրող մարդկանցից, կար մեկ այլ տեսակի խումբ երիտասարդներ, որը դաշնակցական հիմնադիր սերնդի իսկական «տիպարն էին եւ չէին վիճում, քիչ էին խօսում եւ շատ էին գործում» և ավելացնում է, որ դրանց թվում էր նաև Օքոնյանը<sup>51</sup>:

Կարինում Ս. Օքոնյանն աշխատանքներ է ձեռնարկում ՀՅԴ տեղական մարմին կազմակերպելու համար և դրանցում ներգրավում է տեղացի խելոք ու բանիմաց մարդկանց, որոնց մեջ իր պատրաստակամությամբ և եռանդուն գործունեությամբ առանձնանում է Արամ Արամյանը: Հուշագրերի հավաստմամբ՝ երկու ընկերներ Տիգրանն ու Արամը հավասարապես խիզախ էին, պատրաստ՝ նետվելու ցանկացած վտանգի մեջ: Բայց առաջինը համառ էր, ավելի ճարպիկ, նախաձեռնող ու հակված էր ինքնիշխանության: Օքոնյանը ուժեղ անհատականություն էր՝ «երկաթե կամբ ուներ՝ ու գիտեր ուրիշներին պարտադրել իր կամքը»<sup>52</sup>:

Օքոնյանի անունը հիշատակվում է 1890 թ. հոկտեմբերի 9-ին, սակայն, Օ. Ճգնավորյանի վկայությամբ, ով քաջատեղյակ էր Հ. Յ. Դաշնակցության երգրումի հին գործիչների կենսագրական մանրամասներին, նա մուտք է գործել Կարին միայն 1890 թ. դեկտեմբերի 15-ին՝ Արամ Արամյանի և Հաբեթ Նշկյանի հետ միասին<sup>53</sup>: Տիգրան Օքոնյանի շուրջ հիմնականում համախմբվել էին երիտասարդ գործիչներ (Արամ Արամյան, Հաբեթ Նշկյան, Տիգրան Գևորգյան, Հնայակ Գալեմբերյան, Շերամ Ղա-

զարյան և այլք), սակայն մասամբ նրանց էին միացել նաև նախկին «Պաշտպան հայրենյացի» անդամներից Ղավաֆ Գրիգորն ու իր երեք որդիները, զինագործ-քահանա Ավետիս Վեմյանը, Հաջի Հակոբ Սերենկյուլյանը և Հովհաննես Աստուրյանը, ով Հայ Յեղափոխականների Դաշնակցության կենտրոնը համարում էր իր լիազոր-ներկայացուցիչը Կարինում: Այս շրջանակին հարում էին նաև երգրումի դաշտավայրի (օվայի) գյուղացիներից օգենցի Տեր Արիստակեսը, ձիթողցիներ Հարություն Տեր-Վարդանյանը և Սեդրակ Անանյանը, նորշենցի Թաթոսը, իլիջեցի Քյոսե Միքայելը և ուրիշներ<sup>54</sup>:

ՀՅԴ-ի Կարինի կառույցի ղեկավար և բազմաթիվ հայդուկային կոնվների կազմակերպիչ Ս. Օքոնյանն, իր մղած կոնվների փորձն ամփոփելով, կազմեց մի փաստաթուղթ՝ «Հրահանգ հրոսակային խմբերին» վերտառությամբ, որը փաստորեն Հ. Յ. Դաշնակցության պատմության մեջ առաջին մարտական կանոնագրի նախագիծն էր<sup>55</sup>: Այն նախատեսում էր հարձակողական մարտավարության որդեգրում, որը անպաշտպան ժողովրդին դարձնում էր քավության նոխազ՝ հանգեցնելով մեծ կորուստների: Այդ պատճառով էլ հաջորդ տարիների ընթացքում երգրումի վիլայեթում այլևս չենք հանդիպում հախուռն ու անկազմակերպ գործելակերպի:

Ամփոփելով նշենք, որ 1894 թ. Հ.Յ. Դաշնակցությունն արդեն երգրումի վիլայեթում ուներ իր կազմակերպական գործուն կառույցը: Սկսվել էր նաև զենքի ու զինամթերքի տեղափոխման երկարատև ու դժվարին գործը: Այդ ընթացքում այդ կառույցը աստիճանաբար այնքան ընդարձակվեց և հզորացավ, որ երգրումի կոմիտեն 1894 թ. հետո վերածվեց կենտրոնական կոմիտեի և սկսեց հետևողական աշխատանք ծավալել հետագայում էլ կուսակցության շարքերն ընդլայնելու ուղղությամբ:

<sup>50</sup> Օքոնյանի մասին պատմագիտական գրականության մեջ որոշ հպանցիկ անդրադարձներ կան: Դրանց մեջ առանձնանում են Վ. Վալադյանի Տիգրան Օքոնյան, (Հայրենիք, ամսագիր, Բոստոն, թիվ (412), 1960, 1-14 էջեր), Ռ. Հովհաննիսյանի Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը, Ե., 1965, Ա. Մեքոնյանի Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, նույնի՝ Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Ե., 2011, Գ. Խուդինյանի Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը երգրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2003, էջ 57-65 և մի քանի այլ ուսումնասիրություններում:

<sup>51</sup> Յիշողություններ մօտիկ եւ հեռավոր անցեալից, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1932 Յունուար: /2/

<sup>52</sup> Մեքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 246:

<sup>53</sup> Օ. Ճգնավորյան, Բարձր Հայք, Ա հ., Բ մաս, ինքնագիր մենագրություն, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 29:

<sup>54</sup> Նույն տեղում, թ. 30:

<sup>55</sup> Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1, էջ 63-64: